

ՀՀՌՑ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ՆԱԽԱԳԾՍ-
ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՏՍԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԾԱՌՄԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան

«*B*» *hntefeej* 2019 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԻՖՏԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի, շինությունների և տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 3) ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր սվյալներին:

3.2 Եթե Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 480 000 (մեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չնստուցված Ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձևի փոփոխության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 (երեսուն) օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 16 /տասնվեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ



Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 շ, բն. 40
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385

/ստորագրություն/
Կ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար շենքերի, շինությունների և տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման

| | | Ծառայության | | | | | կատարման | |
|-----|----------|--|-----------|---------|---------|------|--|-------------------|
| 2/2 | CPV կոդը | տեխնիկական բնութագիրը | մմսի ուղի | ըրամ | ըրամ | ըրամ | ըրամ | Ժամկետը |
| 1 | 71241200 | <p>Պահակատուն (անցակետ) «ՀՀՌՅ» ՓԲ րնկերության Երևանի ռադիոհեռուստատեսային հաղորդիչ կենտրոնի պահակատան (անցակետի) շենքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում փորձաքննության Ընդհանուր նկարագրություն</p> <p>1. Շինարարության նկարագիրը՝ Երևանի ռադիոհեռուստատեսային հաղորդիչ կենտրոնի տարածքում գտնվող պահակատան (անցակետի) շենքի տարածքում անհրաժեշտ է առկա միջնապատերի վերահատակագծում, հատակների կառուցում, պատերի և առաստաղների հարդարում, ջեռուցման, ջրամա-տակարարման, կոյուղու, կապի և հակահրդեհային սզղանշանային ու օդափոխության համակարգերի տեղադրում: Հարթ, փափուկ ծածկույթով տանիքի վրա մետաղյա կմխիբով Նախագծման Էլակետային տվյալները և թիթեղյա ծածկույթովտանիքի իրականացում: Պարապետերի թիթեղյա ծածկույթի փոխարինում: 1. Վերանորոգվող հարկաբաժնի հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսատվտաճեկը) Նախագծման առաջադրանք Նախագծերում ընդգրկել հետևյալ նշխատանքները</p> | 220 000 | 220 000 | 220 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփ- յան 95 | 20 օրացուցային օր |

| | | | | | |
|--|--|--|--|--|---|
| | | | | | <ul style="list-style-type: none"> ▪ Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները ▪ Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը ▪ Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը <p><u>Աշխատանքներին ներկայացվող պահանջները</u></p> <ul style="list-style-type: none"> ▪ Գոյություն ունեցող փափուկ ծածկույթով հարթ տանիքի վրա մետաղյա կմախքով և թիթեղյա ծածկույթով տանիքի կառուցում; ▪ Պարապետների թիթեղյա ծածկույթի փոխարինում; ▪ Ծածկի երկաթբետոնե կոնսոլային հատվածի սվարում ցեմենտ-ավազե շաղախով; ▪ Կառույցի ֆելզիտե և բազալտե քարերով ճակատների մաքրում և լվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղային վերանորոգում; ▪ Պատուհանների փոխարինում մետաղապատե կաղնագույն պատուհաններով (ներառյալ պատուհանագրգերը); <p>Պատուհանների</p> <ul style="list-style-type: none"> ▪ այրցունքաթափերի տեղադրում (թիթեղ կամ բազալտե սալեր); ▪ Մուտքերի և ներքին դռների փոխարինում մետաղապատե կաղնագույն դռներով; ▪ Մուտքամասերում բազալտե սալերով ասիճան-հարթակների կառուցում; ▪ Միջնորմային պատերի վերահասակագծում; ▪ Ներքին հարդարում (նոր պատերի և շեփերի սվաղում գաջով, գոյություն ունեցող սվաղի վերանորոգում, մածկապատում և ներկում լատեքսային ներկով); ▪ Հատակների իրականացում խեցեալե և կերամոգրանիտե սալերով (ներառյալ կերամոգրանիտե շրիշակները); ▪ Սանիտարական հանգույցի պատերի երեսապատում հախճապով, զուգարանակոնքի, լվացարանի և էլեկտրաջրատարացուցիչի տեղադրում; ▪ Սանիտարական հանգույցների կախովի առաստաղների իրականացում պլաստմասե շերտապրոֆիլով; <p>Նախատեսել ներքին ջրամատակարարման (տաք և սառը), կոյուղու, ջեռուցման, կապի, օդափոխության, էլեկտրալուսավորման («ԼԵՇ» տիպի էներգախնայող լամպեր) և հավանորենային ագրանշման համակարգեր:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Նախատեսել անվտանգության և աշխատակիցների հաշվառման համար անհրաժեշտ սարքավորումների (մետաղորսիչ, պտուտադրնակ) տեղադրման հնարավորություն և սիջոցառումներ |
|--|--|--|--|--|---|

- Նախատեսել ջերմամատակարարման ստորգետնյա գիծ գոյություն ունեցող կաթսայատնից մինչև պահակատուն;
- Շին. աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոմեքանաթափ և տեղափոխում թափոնատեղ:

Նախագծի կազմը, չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հասակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, բոտ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:

Այլ պահանջներ.

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը կկատարվի նախագծողի կողմից:

2. Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:
3. Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով:
4. Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:
5. Այլ փաստաթղթեր շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (Գոնտրոլիցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

Ծառայության

| Զ/Հ | CPV կոդը | տեխնիկական բնութագիրը | մմսիավոր դոկումենտացիա | ժամկետ | ժամկետ | Կատարման հասցեն | Կատարման ժամկետը |
|-----|----------|--|------------------------|---------|--------|-----------------------------------|-------------------|
| | | | | | | | |
| 2 | 71241200 | <p>Տրանսֆորմատորային ենթակայան ԳԵ-126</p> <p>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում գործող ԳԵ-126 տրանսֆորմատորային ենթակայանի (6.2Աx9.2Ա հատակագծում) բառական տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում փորձաքննությամբ</p> <p>Նախատեսվող աշխատանքները</p> <p>Թիթեղյա ծածկույթի քանդում</p> <p>Փայտյա կնախքի քանդում</p> <p>Մետաղյա պրոֆիլներով կնախքի կառուցում՝ պահպանելով տանիքի երկրաչափական չափերը</p> <p>Մետաղյա պրոֆիլների նախաներկում</p> <p>Տանիքածածկի տեղադրում n=0.5 մ հաստությամբ պրոֆիլավոր գունավոր թիթեղից</p> <p>Գունավոր թիթեղից կախովի ջրհորդանների, խողովակների, ձագարների և զագաթաթիթեղների տեղադրում</p> <p>Անհրաժեշտության դեպքում պատերի վերին շարքի տուֆե քարերի ամրացում</p> <p>Ենթակայանի մետաղյա դռների և դարբանների ներկում</p> <p>Շինարարական աղբի մաքրում, իջեցում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ</p> <p>1. Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ:</p> <p>2. Նախագիծն իրականացնել ՀՀ-ում գործող շինարարական նորմերի պահանջների համաձայն:</p> <p>3. Նախագծում ներառել չափագրական մանրամասն գծագրեր, բացատրագիր, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցների գծագրեր, տեխնիկական մանագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:</p> <p>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, սիմաժամանակ էլեկտրոնային կրիչով:</p> <p>5. Ծավալաթերթը ներկայացնել երկու թղթային օրինակից, սիմաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:</p> <p>6. Ներկայացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննական եզրակացությունը:</p> | 120 000 | 120 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Լորք, Հովկե-փյան 95 | 20 օրացուցային օր |

- Փայտյա և այլումինե պրոֆիլներով պատուհանների և դռների փոխարինում մետաղապատե սպիտակ պատուհաններով և դռներով
 - Մուտքանախ դռների փոխարինում այլումինե պրոֆիլներից պատրաստված դռներով
 - Ներսի դռների փոխարինում լամինատե և մետաղապատե (սանհանգույցներ) դռներով
 - Մուտքի բազալտե քարերով աստիճանների վերանորոգում
 - Կառույցի ճակատների տրավերտինե, բազալտե և տուֆե սալերով երեսապատման վերանորոգում (ներառյալ տեխնոլոգիական հատվածը)
 - Ճակատային սալերի կարերի սկալում ցեմենտ-ավազե շաղախով
 - Միջնապատերի շարվածքի իրականացում 20 սմ հաստությամբ պենգաբլոկով
 - Ներքին հարդարում (նոր պատերի սկալում գաջով, գոյություն ունեցող սկալի վերանորոգում, ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով)
 - Հատակների իրականացում կերամոգրանիտե, խեցեսալե և լամինատե սալերով (ներառյալ աստիճանավանդակը)
 - Սանիտարական հանգույցների երեսապատում հախճապով, զրուգարանակոնքերի և վացարանների տեղադրում
 - Կրտադրական հատվածում կախովի առաստաղների իրականացում (ձ=10-12 սմ) ջրակայուն գիպսատվարաթղթե սալերով
 - Սանիտարական հանգույցների կախովի առաստաղների իրականացում պլաստամասե շերտապրոֆիլներով
 - Ամբողջ կառույցի արտաքին մետաղյա դռների, դարբասների, շերտափեղկերի և տարիանման աստիճանների ներկում
 - Նախատեսել ներքին ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, կապի, էլեկտրալուսավորության («ԼԵՂ» տիպի էներգախնայող լամպեր) և հակահրդեհային ազդանշանման համակարգեր
- Շին աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:
- Նախագծի կազմը. չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հատակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:**
- Այլ պահանջներ**
Ներկայացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննական եզրակացությունը:
2. Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:
 3. Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, **հայերեն և ռուսերեն** լեզուներով.

| | | |
|--|--|---|
| | | <p>հակաերդեմային ազդանշանման համակարգեր</p> <ul style="list-style-type: none"> ▪ Մուտքամասի բետոնե հարթակի և ասֆալտի երեսապատում բազալտե սալերով, ուղղահայաց մասերի սվարում ցեմենտավազե շաղախով ▪ Հարթակի վրա հովիտի կառուցում ▪ Տանիքի սարքչիֆերի ծածկույթի մասնակի փոխարինում <p>Շին աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:</p> <p>Նախագծի կազմը, չափագրման մանրամասն գծագրեր, բացատրազրեր յուրաքանչյուր մասի համար, հասակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:</p> <p><i>Այլ պահանջներ.</i></p> <ol style="list-style-type: none"> 1. Ներկայացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննական եզրակացությունը: 2. Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով: 3. Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով: 4. Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով: 5. Այլ փաստաթղթեր շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ: |
|--|--|---|

Պ Ա Ս Վ Ի Ը Ա Տ Ո Ւ Բ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95

Սմբերիաբանկ ՓԲԸ

h/h 1570027609970100

ՀՎՀՀ 01501898

Կ Ա Տ Ա Ը Ո Ղ

ք. Գյումրի, Շիրակացի փ. 83 2, բն. 40

Մոլվերա Բանկ ՓԲԸ

ՀՎՀՀ 205547385



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
« » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Մատուցված ծառայությունների | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|-----------|---|--|---------|--|---------|-------------------------------------|--|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 13 » 06 2019 թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/17-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|-------------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն